ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԵՍԱԿՆԵՐԸ

- քննչական գործողություններ
- գաղտնի քննչական գործողություններ
- փորձաքննություններ

ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԵՍԱԿՆԵՐԸ

- հարցաքննությունը
- առերեսումը
- ցուցմունքը տեղում ստուգելը
- զննումը
- քննումը
- փորձարարությունը
- ճանաչումը
- տեղեկատվության պահանջը
- առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելը
- խուզարկությունը
- առգրավումը
- արտաշիրմումը

ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՔԸ

Քննչական գործողություն կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրա արդյունքով կարող է ձեռք բերվել տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- Մասնակիցները
- Մասնակիցների իրավունքների պաշտպանության երաշխիքները
- Անչափահասներ, անգործունակներ, հոգեկան առողջության խնդիր կամ ծանր հիվանդություն ունեցող անձինք
- Տեխնիկական միջոցների կիրառումը
- Արձանագրությունը և դրա հավելվածները

ԳԱՂՏՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԵՍԱԿՆԵՐԸ

- ✓ներքին դիտումը
- ✓ արտաքին դիտումը
- ✓ նամակագրության և այլ ոչ թվային հաղորդակցության վերահսկումը
- ✓ թվային, այդ թվում՝ հեռախոսային հաղորդակցության վերահսկումը
- ✓ ֆինանսական գործարքների վերահսկումը
- ✓ կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը

ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՔԸ

Գաղտնի քննչական գործողություն կարող է կատարվել միայն այն դեպքում, երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դրա արդյունքով կարող է ձեռք բերվել տվյալ վարույթի համար նշանակություն ունեցող ապացույց և միաժամանակ այլ եղանակով այդ ապացույցի ձեռքբերումը ողջամտորեն անհնար է

ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Միայն դատարանի որոշմամբ
- Քննիչի գրավոր հանձնարարությամբ՝ հետաքննության մարմնի կողմից
- Ծանր կամ առանձնապես ծանր, ինչպես նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթներով
- Անձանց որոշակի շրջանակի նկատմամբ
- Հատուկ տեխնիկական միջոցների օգտագործմամբ

ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- Դատարանի թույլտվությունը յուրաքանչյուր անգամ կարող է տրվել երեք ամիսը չգերազանցող ժամկետով

- Անկախ կարգավիճակից՝ նույն անձի նկատմամբ գաղտնի քննչական գործողության կատարման ընդհանուր ժամկետը նույն վարույթով չի կարող գերազանցել տասներկու ամիսը

ԻՐԱՎԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

- Ստացված, սակայն չնախատեսված տեղեկությունները կարող են օգտագործվել, եթե հետաքննության մարմինը գործել է դատարանի որոշման հիման վրա և բարեխղճորեն
- Արգելվում է կատարել փաստաբանի հետ հաղորդակցվելու դեպքում
- Հատուկ տեխնիկական միջոցների օգտագործումը չպետք է վնաս պատճառի մարդկանց և շրջակա միջավայրին

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՊԱՏԱԿԸ

Վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ է գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ այլ բնագավառում, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքների կիրառում

ԿԱՏԱՐՄԱՆ ՀԻՄՔԸ

1/ Քննիչի որոշումը

2/ Դատարանի որոշումը

3/ Վարույթի մասնավոր մասնակցի կողմից փորձաքննություն նախաձեռնելու կապակցությամբ կազմվող փաստաթուղթ

ՆՄՈՒՇ ՍՏԱՆԱԼԸ

Նմուշը ստացվում է

- ✓ մինչև փորձաքննություն նշանակելը կամ
- ✓ դրա կատարման ընթացքում
- ✓ քննիչի որոշման հիման վրա
- ✓ քննիչի կամ նրա հանձնարարությամբ փորձագետի կողմից
- ✓ եթե դա անհրաժեշտ է փորձաքննության կատարման համար

ՏԵՍԱԿՆԵՐԸ

Լրացուցիչ փորձաքննություն.

- ✓ եզրակացությունը թերի է կամ անորոշ

Կրկնակի փորձաքննություն.

- ✓ Եզրակացությունը հիմնավորված չէ
- ✓ հանձնաժողովային փորձաքննություն կատարած փորձագետները չեն հանգել միասնական հետևության
- ✓ անթույլատրելի են ճանաչվել փորձաքննության ընթացքում օգտագործված ապացույցները
- ✓ խախտվել է փորձաքննության կատարման կարգը